

Տավարի հիպոդերմատոզ (ժողովրդական անվանումը՝ բոռ)

Հիվանդության բնորոշումը. Հիվանդությունը բնորոշվում է բոռերի թրթուրների կուտակման տեղերում առաջացած բորբոքումներով, կենդանիների ինքնաթունավորումներով և մթերատվության անկումներով:

Կլինիկական նշանները. Կենդանիների մեջքի հատվածում առաջանում են բլրակներ, որոնց կենտրոնի խուղակներից ծորացող թարախը չորանալով՝ առաջացնում է կեղեր, որոնք շոշափելիս ցավազգաց են:

Արգելվում է կենդանիների մեջքի այդ բլրակներից արդեն հասունացած թրթուրները սեղմելով հանել: Հետագայում դա կդառնա թարախակույտի պատճառ:

Կանխարգելումը. Բոռը կանխարգելելու համար շոգ եղանակին կենդանիներին պետք է արոտի հանել առավոտյան և երեկոյան ժամերին, երբ բոռերի թռիչքը նվազում է: Ամռանը 20 օրը մեկ անգամ կենդանիներին մշակում են ստոմոգան, Կ-օտրին, բուտոքս, էկտոմին և այլ պերիտրոիդներով (միջատ վանող նյութեր): Այս նյութերը ունեն ուժեղ հոտ և վանում են միջատներին (ներառյալ և բոռերին):

Բուժումը. Բուժման առաջին միջոցառումները անցկացվում են աշնանը՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին), այս ժամանակ կենդանիների ողջ գլխաքանակը մշակում են միջատասպան նյութերով:

Երկրորդ մշակումը կատարում են ձմռան վերջում կամ վաղ գարնանը, երբ թրթուրները տեղակայվում են մաշկի տակ: Միջատասպան նյութերով՝ հիպոդերմին, քլորոֆոս, դիոքսաֆոս-կ, հիպլոխոս. կենդանիներին ցողարկում են ժանեի ներարկիչի միջոցով կամ խոզանակի օգնությամբ քսում են նրանց մաշկին: Մինչև 200 կգ քաշ ունեցող կենդանիների համար օգտագործելով 16 մլ, իսկ 200 կգ-ից բարձր քաշ ունեցող կենդանիների համար՝ 20 մլ միջատասպան նյութերի լուծույթներ (ցողարկման համար):

Իվերմեկ դեղամիջոցը ներարկում են ենթամաշկ միանվագ՝ 1 մլ-ը 50 կգ կենդանի քաշին դեղաչափով: